

**ՄԵՈՂՆԵՐԻ ՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԻՆՉՔԱՅԻՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՍՂ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ս. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ կանոնական իրավունքը հիմնականում նորմավորել է ծնողների և զավակների անձնական, իսկ աշխարհիկ օրենսդրությունը՝ առավելապես ինչ-որային հարաբերությունները:

Ծնողների և զավակների անձնական և ինչքային իրավունքները պայմանավորված էին հասարակության մեջ հաստատված ինչքային հարաբերություններով, ընտանիքի անդամների նկատմամբ հոր մեծ իրավունքներով, տոհմական հարստության պահպանման և ծխի հարատևության շահերով: Նյութերը հավաստում են, որ ընտանիքի գլուխը (հայրը) անձնական և ինչքային մեծ իրավունքներ է ունեցել զավակների նկատմամբ, որը երբեմն հիշեցնում է հռոմեական իրավունքի patria potestas-ը: Հայրերը տիրապետում էին զավակների ինչքը, զավակի նկատմամբ նրանց անձնական իրավունքները գործնականում սահմանափակված չէին: Մոր իրավունքներն անհամեմատ սահմանափակ էին:

Շահապիվանի է կանոնից¹, ինչպես նաև «Աւրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից» Կոստանդիանոսի եւ Թէոդոսի եւ Լեոնի»² դատաստանագրքի առանձին հոդվածներից բխում է, որ V դ. փոքր ինչ ընդարձակվում են մոր իրավունքները զավակների նկատմամբ, և օրենսդիրն սկսում է կարևորություն տալ նաև մոր կամքին և իշխանությանը: Դա երևում է՝ «եթէ երիցու ուրուք գաղտ պսակ եղեալ իցէ առանց հաւր եւ մաւր աղջկանն» արտահայտությունից: Դիտելի է նաև, որ Սահակի Ի է և ԻԸ կանոնները, ի տարբերություն Բարսեղի «Առ Ամփիլոքոս» կանոնախմբի Ի կանոնի, խոսում են ոչ միայն հոր, այլև առհասարակ զավակների ամուսնական ազատության հարցում «ծնաւդաց» իշխանությունը սահմանափակելու մասին: Հավանական է կարծել, որ Սահակի և Շահապիվանի կանոնները արտահայտում են մոր իրավունքների բարելավումը զավակների նկատմամբ: Այս երևույթը գնահատելի է, եթե նկատի ունենանք հռոմեական իրավունքի այլ դիրքորոշումը պատմական նույն դարաշրջանում:

Արդ, ծնողներն ինչպիսի՞ անձնական իրավունքներ և պարտականություններ էին իրաւականացնում զավակների նկատմամբ:

Քրիստոնեության հաստատմամբ կյանքի կոչվեց և կանոնական նորմերով վավերացվեց ծնողների առաջին պարտականությունը՝ զավակին կնքելու կամ մկրտելը³, Եկեղեցին մկրտությանը տալիս էր մեծ կարևորություն: Մկրդ-

¹ Տե՛ս «Կանոնագիրք հայոց», աշխատասիրությամբ Վ. Հ ա կ ո բ յ ա ն ի, հ. Ա, Երևան, 1964, էջ 439, հ. Բ, Երևան, 1971:

² Մատթական դատաստանագրքը, լոյս ընծայեաց Ա. Ղ լ տ ճ ե ա ն, էջմիածին, 1917:

³ Շիրք մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807, էջ 15:

տության հետ կյանքի կոչվեց կնքահայրության և կնքամայրության կանոնա-
իրավական նորմը: Կնքահայր և կնքամայր կոչվող անձինք ստանձնում էին
երեխայի հոգևոր հոր և հոգևոր մոր կոչում՝ «Մահաշոցով» սահմանված պարտա-
կանության կատարումը կյանքում ապահովելու համար: Եկեղեցին նրանց հա-
մար սահմանեց կանոնական իրավունքներ և պարտականություններ: Նրանց
մեջ ծագում էին հոգևոր ազգակցության հարաբերություններ և այլն:

Զավակին կնքելու ծնողների պարտականությունը հայ կանոնական իրա-
վունքում առաջին անգամ օրինականացրեց Գրիգոր Լուսավորիչը: Նրա ԺԴ կա-
նոնի համաձայն, ծնողը պարտավոր էր զավակին շթողնել անկնունք: Եթե երե-
խան մահանում էր առանց կնքվելու, մեղավորները (ծնողները) ենթարկվում
էին ապաշխարանքի ձեռնարկության, Ա ընդ աւրինաւք⁴: Կանոններն արգելում
էին երեխային առանց կնքության պահել: Բարսեղին վերագրված «Վասն պէսպէս
եւ բիւրապատիկ ախտից» կանոնախմբի ՄԼԴ կանոնի համաձայն՝ «Զերեխայ
մի՛ որ իշխեսցէ պահել առանց կնքոյ քան գձ աւր կամ գէ»⁵:

Ծնողների կարևորագույն պարտականությունն էր զավակներին դաստիա-
րակելը: Նախարարները և երկրի այլ իշխողներ երեխաներին տալիս էին աշ-
խարհիկ և հոգևոր դաստիարակություն: Դասակարգային մեծ խտրություն
ազնվականների ու շինականների մեջ լուրջ խոչընդոտ էր և ամեն մանուկ շու-
նեի (և չէր կարող ունենալ) դաստիարակության բոլոր բարիքները վայելելու
բախտ⁶: Դժբախտաբար մեր պատմիչներն ոչինչ չեն հաղորդում շինականների
ու ծառա-աղախիների կողմից այդ պարտականության իրականացման մա-
սին: Մի բան պարզ է, որ նրանք երեխաներին դաստիարակում էին անձամբ,
ինչպես Հացունին է ասում՝ «անհրապույտ պարզությամբ», մինչդեռ մեծատան
զավակները հաճախ հանձնվում էին օտարի դաստիարակության՝ ղեկավար-
վելով ազնվականության ավանդական սովորությամբ:

Ազաթանգեղոսը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին և ուրիշներ վկայում են,
որ Պարսից, Հայոց և Վրաց արքունիքում ընդունված սովորույթ էր արքայոր-
դիններին երեխի իշխանական տների դաստիարակության հանձնելը: Դաստիա-
րակության այդ ձևը սովորութա-իրավական հանձնարարություն էր և հայտնի
էր զայակութուն անունով: Այսպես, ըստ Խորենացու՝ Տրդատի դայակն էր
Մանդակունի իշխանը: Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները «սնուցանէին...
ղորդին արքային (Տիրանի) զԱրշակ», կամ՝ «դայեակը և սնուցիչը էին թա-
գաւորին Արշակայ»⁷: Դայակի դաստիարակությանն էին հանձնվում նաև մե-
ծատն:Հմիկ ազնվականների և հոգևոր ավագանու զավակները: Այսպես, Խորե-
նացու մի վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորչի ավագ որդին «մնաց դայակների
մոտ»: Բուզանդի և Փարպեցու վկայությունների համաձայն՝ դայակների դաս-
տիարակությանն էին հանձնված նաև Տաճատ Ռշտունին, Շավասպ Արծրունին,
Մամիկոնյանների, Կամսարականների զավակները: Դայակներն ընտրվում էին
արքայական կամ նախարարական տան մոտ կանգնած ընտանիքներից: Երևե-

⁴ «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 247:

⁵ «Կանոնագիրք հայոց», Բ, էջ 164:

⁶ Տե՛ս Վ ար դ ան Հ ա ջ ու ն ի, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 9—37 (տե՛ս նաև ն ու յ ն ի՝ Հայուհին պատմութեան առջեւ, Վենետիկ, 1936, էջ 9—14):

⁷ Մ ո վ ս ի ս ի Խ ո ռ ե ն ա ջ ո յ Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան-
եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 162, Փ աւ ս տ ք ա ի Բ ու Վ ր ա ն դ ա ջ ո յ Պատ-
մութիւն հայոց, ի Վենետիկ, 1832, էջ 46, նաև էջ 66, 104:

ի նախարարների զավակների դավանները լինում էին նաև ուսյալ փոքր նախարարները և ունեւոր աղատները:

Արքայորդիների դավակությունը տեւում էր երկար: Դա երեւում է Բուզանդի մի հաղորդումից՝ «...թողին զսանն իւրեանց զԱրշակ... Եւ շոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց...»⁸: Հաղունու կարծիքով՝ «իշխանորդվոց դայակությունը կարճ կը տեւէ, հավանորեն մինչև անոնց իբր յոթնամյա հասակը»⁹: Դավակությունը սանի և զավակի միջև ստեղծում էր ներքին ամուր կապ ամբողջ կյանքի ընթացքում: Հաղվադակ էր դայակի և սանի թշնամությունը: Վտանգի պահին նրանք մշտապես հասնում էին միմյանց օգնության: Նվիրվածությունը դայակի կարեւորագույն հատկանիշն էր, պարտականությունը, որը մեծապես գնահատվում էր սանի ու նրա տան կողմից և, իբրև հատուցում, դայակներն արժանանում էին բարձրաշխարհիկ պատիվների: Այսպես, Արշակն իր սիրելի դայակ Վասակ Մամիկոնյանին կարդեց հայոց սպարապետ: էլ շնք խոսում ինչքային կամ ստացվածքային օգուտների մասին, որոնցով երախտահատույց ծնողները պատվում էին դայակին:

Դավակությունը բնորոշ նախարարական սովորութա-իրավական, առավելապես սովորութական հաստատություն էր, որն սովատական Հայաստանում ծագել և գոյատեւել է նախարարության հետ: Նյութերը հավաստում են, որ դավակությունը մշտապես գոյություն է ունեցել վաղ ավատական շրջանում: Թեև այն ունեցել է կարեւոր կոչում, բայց դավակության հարաբերությունը նորմավորող աշխարհիկ իրավական նորմեր չունենք: Դժվար է ասել՝ օրենսդիրը նորմավորվել է այդ հարաբերությունը, թե՞ ոչ: Այնուհանդերձ՝ կանոնական հուշարձաններում պահպանվել են երկու հաղորդումներ: Մեկը՝ Սահակի ԻԲ կանոնն է, որն արգելում էր քահանայական կարգին պատկանող հոգևորականներին դավակություն անել, սահմանելով՝ «յաղատաց տունս, յիշխանի տունս ի դայեկութիւն... մի՛ իշխեսցես առնել»: Ինչո՞ւ. ազի այնու պատճառաւ զրկեալ նեղեն զժառանգակիցս իւրեանց, յորում գտան բազումք պարտաւորեալք»¹⁰: Այս կանոնը պաշտոնազրկութեամբ էր սպառնում զանցառու քահանային: Այստեղից հետեւում է, որ IV—V դդ. (մինչև Սահակի նշված կանոնի ընդունումը) աշխարհականներից բացի դավակութեամբ զբաղվում էին նաև հոգևորականները:

Մյուս կանոնական որոշումը ընդունվել է Դվինի երկրորդ ժողովում՝ 555 թ. և նպատակ է ունեցել արգելելու ուղղափառ եկեղեցու հավատացյալների շփումը նեստորականների հետ: Սահմանվեց՝ «մի՛ հաղորդել ընդ նոսա... մի՛ ի խնամութիւն, մի՛ ի դայեկութիւն...»¹¹: Պահանջի զանցառուները ենթակա էին նզովքի:

Դավակության վերացմամբ չէր ավարտվում իրենց երեխաներին դաստիարակելու ազնվական ծնողների պարտականությունը: Այն շարունակվում էր հայրենի տանը, ուր վարդապետների և աշխարհիկ դաստիարակների ձեռքի տակ նրանք ստանում էին կրոնական և աշխարհիկ դաստիարակություն: Դաստիա-

8 փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 47:

9 վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 24:

10 «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 380:

11 «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 76:

րակության որևէ ձևի նախընտրումը հոր իրավունքն էր: Հայրը հաճախ նախապատվությունը տալիս էր կրոնական դաստիարակությանը: Այս տեսակետից ուշագրավ է ստորև բերվող վկայությունը (VII գ.). «Հայր իմ էած գիս ի վանքս Թաթլոյ և էի եւթնամաս և կացի ի վանքս յիսուն և վեց ամ»¹², Բուղանդի վկայությամբ՝ Ներսես կաթողիկոսը հավատալոր կույսերի համար ստեղծել էր կուսանոցներ, կույսերի առևանգումը խափանելու նպատակով, ցանկապատել դրանք՝ ապրուստը հոգալու պարտականությունը դնելով երկրի և ընտանիքի վրա: Դաստիարակության նշված ձևերը նույնպես առավելապես աղանդականների և ունեւոր աղաւտների արտոնությունն էին: Շինականները և ծառա-աղախինները դրանցից համարյա չէին օգտվում: Նրանք առավելապես վայելում էին հոգեւորականների քարոզչական-խրատական գործունեության թրաքիչները»:

Կանոնական նորմերը պարտավորեցնում էին ծնողներին՝ զավակներին դաստիարակել աստծու նկատմամբ հավատի, երկյուղածության, կանոնական զանազան պարտականությունները կատարելու և պաշտպանելու ոգով: Մեղքների այդ պարտականությունը առկա է եկեղեցական գրվածքներում և կանոնական նորմերում: Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՃԳ կանոնում կարդում ենք՝ «Մնալը որ ղորդիս իւրեանց ակնառութեամբ սիրեն եւ ոչ խրատեն երկիւղին Աստուծոյ՝ նզովեալ եղիցին»¹³:

Մեղքների հաջորդ պարտականությունը (նաև իրավունքը) նոգածնի անվանակոչությունն էր: Կանոնական աղբյուրները հավաստում են, որ IV դ. սկսած եկեղեցին երեխայի անվանակոչությունը կապել է մկրտության հետ: Գրիգոր Նարեկացին գրում է. «յաւաղանէ կոչեցայ Արթուն»¹⁴, Երեխային անվանակոչելը ծնողների ավանդական իրավունքն էր: Նրանք այդ բանում ղեկավարվում էին զանազան նկատառումներով: Եկեղեցին հարգում էր հոր ավանդական իրավունքը և միևնույն ժամանակ հանդես չէր գալիս պասսիվ դերում: Միսարան «Մաշտոցի» մկրտության կանոնում կա այսպիսի արտահայտություն՝ «Եւ ապա խնդրէ և ղնէ զանունն երեխային»¹⁵: Այս դարձվածքը ցույց է տալիս, որ ծնողները երեխայի անունը նախապես որոշում էին, եկեղեցում այդ անունը քահանան օրինականացնում էր:

Գրիգոր Լուսավորիչը վկայում է, որ ընտանիքը զավակի անվանակոչությունը նշանավորում էր տոնախմբությամբ, որ թափում ուրախութիւն ցուցանեն ի ծննդեանն, և բարեկամօք և մերձաւորօք տօն կատարի ծննդեանն և անուանակոչութեանն»¹⁶, Եթե անվանակոչության նեղայացածները նախատեսած չէին լինում երեխայի անունը, ապա օգնության էր հասնում քահանան, առաջարկելով որևէ եկեղեցական սրբի կամ եկեղեցու սրբազործած աշխարհականի անուն: Մեծատոհմիկների զավակները ստանում էին նաև տոհմային մականուն, որով ընդգծվում էր նրանց տոհմիկ ծագումը: Հասկանալի է, որ շինականները և ծառա-աղախինները կարիք չունեին նշելու իրենց տոհմիկ ծագումը: Նրանք անվանակոչվում էին առանց հայրենի անվան¹⁷:

12 Գ. Հովհաննիսյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 8:

13 «Կանոնադիրք հայոց», Բ, էջ 26: (Տե՛ս նաև Գանգրայի ժե կանոնը):

14 Գ. ր. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 186:

15 «Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 15:

16 Գ. ր. Լուսավորիչ, Յաճախապատում ճառք, էջմիածին, 1894, էջ 150:

17 Տե՛ս Վ. Հացոունի, նշվ. աշխ., էջ 82—84:

Որո՞նք էին ծնողների, զխավորապես հոր անձնական իրավունքները զավակների նկատմամբ: Նախ՝ պետք է նկատել, որ հոր (ծնողների) անձնական իրավունքը միևնույն ժամանակ խորհրդանշում էր զավակի պարտականությունը հոր (ծնողների) նկատմամբ:

Հոր կարևորագույն իրավունքը՝ զավակից հնազանդություն պահանջելն էր կամ զավակը պարտավոր էր հնազանդվել հորը: Այդ իրավունքը (և պարտականությունը) ունի խոր արմատներ և ըստ ամենայնի դրսևորված է հետազոտվող դարաշրջանի հուշարձաններում: Հարազատ մնալով դարաշրջանի սոցիալական հարաբերություններին, նոր կրոնի առաքյալները քարոզում էին «Որդիք, հնազանդ եղեք ձեր ծնողներին ամեն բանի մեջ, որովհետև այդ է հաճո տիրոջը» (Պողոս առաքյալի թուղթը առ Կողոսացիս, դ. 3-րդ, 20):

Պատմական վկայություններ ունենք այն մասին, որ հայրը նյութական կարիքից դրդված վաճառք է հանել որդուն: Կամ՝ խորհնացու, Բուզանդի, Նդիշի, Ստ. Օրբելյանի և այլոց վկայությամբ՝ հայրը որդիներին և դուստրերին իբրև պատանդ հանձնում էր օտար նվաճողներին¹⁸: Նրա իրավունքն էր զավակին զանազան պատիժների ենթարկել: Այս տեսակետից ուշադրության արժանի է Նդնիկ Կողբացու հետևյալ գրառումը. «Եթե որդի ուրուք մտավարժ իցէ, դան ոչ ըմպիցէ. և որ չէն մտավարժ՝ բազում անգամ զծառայ այր առաջի նորա դան հարկանեն, զի ի նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ. ապա եթէ և այնու ևս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն»¹⁹:

Զավակներից հնազանդություն պահանջելու հոր իրավունքը, հակառակ դեպքում նրանց պատժելը արտահայտվել է հայ կանոնական իրավունքում: Այսպես, Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ի՛նչ կանոնը սահմանում էր՝ «Որդիք որ ոչ հնազանդին ծնաւդաց իւրեանց...»: Սակայն այդ կանոնով սահմանվող իրավական հետևանքներն ամենևին չեն խոսում ծնողների անսահմանափակ իրավունքների մասին: Ընդհակառակը, դրանք ծնողներին հորդորում էին սիրով վերաբերվել զավակներին, չծեծել նրանց (Գանգրայի՝ ԺԵ). որովհետև դրանցից ծագում են զանազան չարիքներ:

«Աւրէնք յաղթող թագաւորացի» նորմերը նույնպես զավակների համար պարտականություն էին համարում հնազանդվելու հորը: Սակայն թվում է, թե նրանք նույն հարաբերությունը կարգավորում են առավել պահպանողական ձևով և ինչ-որ չափով հիշեցնում են հին իրավունքը: Այդ են վկայում հետևյալ արտահայտությունները՝ «ոչ հնազանդին հօրն», «գոհանայ զնոցանէ (որդիներից — Ս. Հ.) վասն հնազանդութեան՝ զոր ցուցին իւրեան և մեծարեցին և հարկեցան՝ որպէս վայել էր ծնողին. և վասն այնորիկ ազատէ զնոսա ի հնազանդութենէ իւրմէ... Եւ չեն ազատեալքն այնուհետև պարտական հնազանդութեան հօր իւրեանց», «ազատք են ի հնազանդութենէ հօրն», «առնէ զնա (որդուն — Ս. Հ.) ինքնիշխան՝ արտաքոյ իւր հնազանդութեան»²⁰ և այլն:

Ամենից առաջ դիտելի է, որ նշված հոգվածները նորմավորում էին հոր իրավազորությունը որդու նկատմամբ, մինչդեռ կանոնական իրավունքում, ինչպես տեսանք, գործածված էր «ծնաւդաց» բառը: Նշանակում է, «Աւրէնք

18 Մ. Խորենացի, Նշվ. աջիւ., էջ 271, Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Բիֆլիս, 1910, էջ 60 և այլն, Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (4-րդ դար), Երևան, 1951, էջ 11:

19 Նդնիկայ վարդապետի Կողբացւոյ Նդծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 58:

20 Տե՛ս «Ասորական դատաստանագիրք», հոդ. 6, 15, 93, 94:

րավության որևէ ձևի նախընտրումը հոր իրավունքն էր: Հայրը հաճախ նախապատվությունը տալիս էր կրոնական դաստիարակությանը: Այս տեսակետից ուշագրավ է ստորև բերվող վկայությունը (VII դ.). «Հայր իմ էած դիս ի վանքս Թաթլոյ և էի ելթնամես և կացի ի վանքս յիսուն և վեց ամ»¹², Բուղանգի վկայությամբ՝ Ներսես կաթողիկոսը հավատավոր կույսերի համար ստեղծել էր կուսանոցներ, կույսերի առևանգումը խափանելու նպատակով, ցանկապատել դրանք՝ ապրուստը հոգալու պարտականությունը դնելով երկրի և ընտանիքի վրա: Դաստիարակության նշված ձևերը նույնպես առավելապես ազնորականների և ունևոր ազատների արտոնությունն էին: Շինականները և ծառա-աղախինները դրանցից համարյա չէին օգտվում: Նրանք առավելապես վայելում էին հոգևորականների քարոզչական-խրատական գործունեության «բարիքները»:

Կանոնական նորմերը պարտավորեցնում էին ծնողներին՝ գավակներին դաստիարակել աստծու նկատմամբ հավատի, երկյուղածության, կանոնական զանազան պարտականությունները կատարելու և պաշտպանելու ոգով: Ծնողների այդ պարտականությունը առկա է եկեղեցական դրվածքներում և կանոնական նորմերում: Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՃԳ կանոնում կարգում ենք՝ «Ծնաւղբ որ զորդիս իւրեանց ակնառութեամբ սիրեն եւ ոչ խրատեն երկիւղին Աստուծոյ՝ նզովեալ եղիցին»¹³:

Ծնողների հաջորդ պարտականությունը (նաև իրավունքը) նոգածնի անվանակոչությունն էր: Կանոնական աղբյուրները հավաստում են, որ IV դ. սկսած եկեղեցին երեխայի անվանակոչությունը կապել է մկրտության հետ: Գրիգոր Նարեկացին գրում է. «յաւաղանէ կոչեցայ Արթուն»¹⁴: Երեխային անվանակոչելը ծնողների ավանդական իրավունքն էր: Նրանք այդ բանում ղեկավարվում էին զանազան նկատառումներով: Եկեղեցին հարգում էր հոր ավանդական իրավունքը և միևնույն ժամանակ հանդես չէր գալիս պասսիվ դերում: Միսարան «Մաշտոցի» մկրտության կանոնում կա այսպիսի արտահայտություն՝ «Եւ ապա խնդրէ և դնէ զանունն երեխային»¹⁵: Այս դարձվածքը ցույց է տալիս, որ ծնողները երեխայի անունը նախապես որոշում էին, եկեղեցում այդ անունը քահանան օրինականացնում էր:

Գրիգոր Լուսավորիչը վկայում է, որ ընտանիքը զավակի անվանակոչությունը նշանավորում էր տոնախմբությամբ, որ «բազում ուրախութիւն ցուցանեն ի ծննդեանն, և բարեկամօք և մերձաւորօք տօն կատարի ծննդեանն և անուանակոչութեանն»¹⁶: Եթե անվանակոչության նե-կայացածները նախատեսած չէին լինում երեխայի անունը, ապա օգնության էր հասնում քահանան, առաջարկելով որևէ եկեղեցական սրբի կամ եկեղեցու սրբազորածած աշխարհականի անուն: Մեծատոհմիկների զավակները ստանում էին նաև տոհմային մականուն, որով ընդգծվում էր նրանց տոհմիկ ծագումը: Հասկանալի է, որ շինականները և ծառա-աղախինները կարիք չունեին նշելու իրենց տոհմիկ ծագումը: Նրանք անվանակոչվում էին առանց հայրենի անվան¹⁷:

12 Գ. Հովհաննիսյան, Հիշատակարանք ձեռագրաց, Կ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 8:

13 «Կանոնադիրք հայոց», Բ, էջ 26: (Տե՛ս նաև Գանգրայի Ժե կանոնը):

14 Գր. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 186:

15 «Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», էջ 15:

16 Գր. Լուսավորիչ, Յաճախապատում ճառք, էջմիածին, 1894, էջ 150:

17 Տե՛ս Վ. Հացոունի, նշվ. աշխ., էջ 82—84:

Որո՞նք էին ծնողների, գլխավորապես հոր անձնական իրավունքները զավակների նկատմամբ: Նախ՝ պետք է նկատել, որ հոր (ծնողների) անձնական իրավունքը միևնույն ժամանակ խորհրդանշում էր զավակի պարտականությունը հոր (ծնողների) նկատմամբ:

Հոր կարևորագույն իրավունքը՝ զավակից հնազանդություն պահանջելն էր կամ զավակը պարտավոր էր հնազանդվել հորը: Այդ իրավունքը (և պարտականությունը) ունի խոր արմատներ և ըստ ամենայնի դրսևորված է հետագույնով դարաշրջանի հուշարձաններում: Հարազատ մնալով դարաշրջանի սոցիալական հարաբերություններին, նոր կրոնի առաքյալները քարոզում էին «Որդիք, հնազանդ եղեք ձեր ծնողներին ամեն բանի մեջ, որովհետև այդ է հաճո տիրոջը» (Պողոս առաքյալի թուղթը առ Կողոսացիս, դ. 3-րդ, 20):

Պատմական վկայություններ ունենք այն մասին, որ հայրը նյութական կարիքից դրդված վաճառք է հանել որդուն: Կամ՝ խորենացու, Բուղանդի, Եղիշի, Ստ. Օրբելյանի և այլոց վկայությամբ՝ հայրը որդիներին և դուստրերին իբրև պատանդ հանձնում էր օտար նվաճողներին¹⁸: Նրա իրավունքն էր զավակին զանազան պատիժների ենթարկել: Այս տեսակետից ուշադրության արժանի է Եղնիկ Կողբացու հետևյալ գրառումը. «Եթե որդի ուրուք մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ. և որ չէն մտավարժ՝ բազում անգամ զծառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի ի նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ. ապա եթէ և այնու ևս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն»¹⁹:

Զավակներից հնազանդություն պահանջելու հոր իրավունքը, հակառակ դեպքում նրանց պատժելը արտահայտվել է հայ կանոնական իրավունքում: Այսպես, Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ի՛նչ կանոնը սահմանում էր՝ «Որդիք որ ոչ հնազանդին ծնաւոց իւրեանց...»: Սակայն այդ կանոնով սահմանվող իրավական հետևանքներն ամենեւին չեն խոսում ծնողների անսահմանափակ իրավունքների մասին: Ընդհակառակը, դրանք ծնողներին հորդորում էին սիրով վերաբերվել զավակներին, չծածել նրանց (Գանգրայի՝ ԺԵ). որովհետև դրանցից ծագում են զանազան չարիքներ:

«Աւրէնք յաղթող թագաւորացի» նորմերը նույնպես զավակների համար պարտականություն էին համարում հնազանդվելու հորը: Սակայն թվում է, թե նրանք նույն հարաբերությունը կարգավորում են առավել պահպանողական ձևով և ինչ-որ չափով հիշեցնում են հին իրավունքը: Այդ են վկայում հետևյալ արտահայտությունները՝ «ոչ հնազանդին հօրն», «գոհանայ զնոցանէ (որդիներից — Ս. Զ.) վասն հնազանդութեան՝ զոր ցուցին իւրեան և մեծարեցին և հարկեցան՝ որպէս վայել էր ծնողին. և վասն այնորիկ ազատէ զնոսա ի հնազանդութենէ իւրմէ... Եւ չեն ազատեալքն այնուհետև պարտական հնազանդութեան հօր իւրեանց», «ազատք են ի հնազանդութենէ հօրն», «առնէ զնա (որդուն — Ս. Զ.) ինքնիշխան՝ արտաքոյ իւր հնազանդութեան»²⁰ և այլն:

Ամենից առաջ դիտելի է, որ նշված հոգվածները նորմավորում էին հոր իրավագործությունը որդու նկատմամբ, մինչդեռ կանոնական իրավունքում, ինչպես տեսանք, գործածված էր «ծնաւոց» բառը: Նշանակում է, «Աւրէնք

18 Մ. Խորենացի, Նշվ. աշխ., էջ 271, Ստ. Օրբելյան, Պատմութիւն հայաստանի Սիսական, Բիֆլիս, 1910, էջ 60 և այլն, Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (4-րդ դար), Երևան, 1951, էջ 11:

19 Եղնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 58:

20 Տե՛ս «Աստրական դատաստանագիրք», հոդ. 6, 15, 93, 94:

յաղթող թագաւորացը», ի տարբերութիւն հայ կանոնական իրավունքի, ընդգծում էր, որ որդին պարտավոր է հնազանդվել հորը և ոչ ընդհանրապէս ծնողներին, Դա բխում էր որդիները հորն են հնազանդ սկզբունքից:

Ո՞ւմ էին պատկանում զավակներն ամուսնալուծութեան դեպքում: Ծնողների համար այս կարևոր իրավունքը լուծված էր հոր շահերից և իրավունքներից ելնելով, Որպէս կանոն՝ զավակները պատկանում էին հորը: Սակայն այս իրավունքը չէր տարածվում ազատ կնոջ հետ ամուսնացած ծառայի վրա, եթե այդպիսի հարաբերութիւնից ծնվում էին հրեխաներ և կինը աղախնութիւն չէր ստանձնում, ապա «Աւրէնք յաղթող թագաւորացի» 75 հոդվածով՝ «եւանէ ինքն և մնան որդիք ի ծառայութեան»:

Որդիների մայրն իրավունք չունէր ամուսնուց բաժանվելու դեպքում «յորդոցն առնուլ զհետ իւր», որովհետեւ 84 հոդվածի ուժով «օրինօք ծնեալ որդիք ընդ հօրն հրամանաւ են»: Մայրը որդիներին կարող էր վերցնել միայն այն դեպքում, «եւրք խոստովանի, թէ այս որդիս ի շնութենէ է»: Շահապիվանի ժողովի Դ կանոնը ընդարձակեց մոր իրավունքն որդիների նկատմամբ, հնարավորութիւն վերապահելով վերցնելու որդիներին կեսը, «եթէ ոք զկին թողցէ՝ զորդոց մայր՝ առանց բանի պոռնկութեան»²¹, Իսկ եթե՝ ամուսինը «վասն բանի պոռնկութեան» էր թողնում կնոջը. հարցին պատասխանելու համար պետք է հետեւեք 84-րդ հոդվածի պատասխանին՝ օրինական զավակը պատկանում էր հորը: Նշանակում է ներքին հարազատութիւն կար Շահապիվանի Դ կանոնի և նշված 84-րդ հոդվածի միջև, սակայն այն էական տարբերութեամբ, որ Շահապիվանը մի քայլ առաջ էր անցնում 84 հոդվածից և ընդարձակում էր մոր իրավունքը զավակի նկատմամբ: Առաջին անգամ մորն իրավունք վերապահվեց տիրանալու իր զավակների կեսին («զորդիս... բաժանեսցեն... զկէսն կնոջ տացեն»), եթե ամուսինը շնաբարո էր: Նշելի է, որ այդ նորամուծութիւնը մեծ նվաճում էր կնոջ համար և հոռւ ավանդական իրավունքների լուրջ սահմանափակում՝ զավակների նկատմամբ:

Զավակը պարտավոր էր հնազանդվել հորն այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում էր նրա իշխանութեան տակ, Եւր որդիները «զբան ի կատարելութիւն և ոչ հնազանդին հօրն», հայրը կարող էր աղատել նրանց իր իշխանութիւնից: Նման դեպքերում հայրը «պարտ է գրել նոցա գիր ազատութեան առաջի դատարի... և վասն այնորիկ ազատէ զնոսա ի հնազանդութենէ իւրմէ՝ անձնիշխանս լինել... Եւ շեն աղատեալքն այնուհետեւ պարտական հնազանդութեան հօր իւրեանց»²², Ավելին, նույն հուշարձանի 94 հոդվածն իրավունք էր տալիս հորն իր իշխանութիւնից ազատելու «զորդի իւր, որ է մանուկ»:

Հորը հնազանդվելու պարտականութեան հետ սերտորեն կապված էր ծընողներին մեծարելու և պատվելու որդու պարտականութիւնը: Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՃԲ կանոնը նշովում էր որդիներին, «որ ոչ պատուեն ծնաւղս իւրեանց», Որդուն նշովում էր նաև Գանգրայի ԺԶ կանոնը, եթե նա «արհամարիցէ եւ ոչ զարժան և ոչ զիրաւ պատիւ ծնաւղացս հատուցանիցէ իբրև ծնաւղաց»²³,

Խոսելով ծնողների և զավակների ինչֆային իրավահարաբերութեաններին մասին, նշենք, որ ինչքի նկատմամբ ամուսինների բաժան սեփականութեան

²¹ «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 435:

²² «Ասորական դատաստանագիրք», հոդ. 6 և 15:

²³ «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 196—197:

իրավունքը և հոր մեծ ինչքային իրավունքներն էապես սահմանափակում էին ղավակի սեփականատիրական իրավունքները ընտանիքում: Հայրական հնա-
վանդության ներքո գտնվող ղավակը սեփականության իրավունք չունեի հորը
կամ մորը պատկանող ինչքի նկատմամբ՝ նրանց կենդանության ամբողջ շրջա-
նում: Խիստ սահմանափակ էր նրա իրավագործությունը ինչքային գործարքներ
կնքելիս և, ընդհանրապես, նա սեփականության իրավունքի պասսիվ սուբյեկտ
էր: Զավակի աշխատանքով ձեռք բերված ինչքը դառնում էր հոր սեփականու-
թյունը, քանզի նույն ընտանիքում հոր իշխանության ներքո գտնվող ղավակը
իր սեփական ինչքն ունենալ չէր կարող: Այսպիսի պայմաններում, բնական
է կարծել, որ ծնողի և ղավակի միջև ինչքային գործարքներ կնքվել չէին կարող
և ղավակը ծնողի դեմ չէր կարող նման հայց հարուցել: Ամենևին էլ պատահա-
կան չէ, որ «Արէնք յաղթող թագաւորացը» այդպիսի իրավագործություն չի
սահմանել ղավակի համար:

Զավակը ծնողների կամ ուրիշի ինչքի նկատմամբ սեփականության իրա-
վունք էր ստանձնում գլխավորապես հետևյալ դեպքերում. ա) երբ առանձ-
նաճառով՝ ստեղծում էր հոր տնից անկախ իր սեփական տնտեսությունը, բ)
ծնողի մահվամբ ժառանգական իրավունքներ ստանձնելով, գ) մերձավոր ազ-
գականների նվիրատվության կամ կտակի համաձայն ինչքային իրավունքներ
ձեռք բերելիս:

Հայրական հնազանդությունից դուրս գալը և առանձին տնտեսություն
հիմնելը, որքան էլ անցանկալի էր հոր համար, անխուսափելի էր մասնավոր
սեփականության վրա հիմնված ավատական տնտեսության պայմաններում:
Նահապետական պատկերացումներն անկարող էին խանգարել հայրական ըն-
տանիքից առանձնանալուն: Այն զարգանում էր ու ծավալվում, քանզի ուներ
մի շարք անժխտելի առավելություններ՝ առաջին հերթին ղավակի և նրա փոքր
ընտանիքի ինչքային շահերի առումով: Փոքր ընտանիքում ղավակն իր ունեց-
վածքի տերն էր, ընտանիքի գլուխը՝ այստեղից բխող անձնական և ինչքային
իրավունքների ամբողջ ծավալով:

Դարաշրջանի կանոնական և աշխարհիկ օրենսդրության հետադրություն-
նից երևում է, որ նրանք նորմավորել են ղավակի առանձնաճառով հետ կապված
ինչքային հարաբերությունները: Ի տարբերություն կանոնական իրավունքի
նորմերի, որոնք հանդուրժող էին նման ղավակների նկատմամբ, աշխարհիկ
իրավունքի նորմերը պահպանողական էին, անցանկալի ինչքային հետևանքներ
էին սահմանում ղավակի համար, ելնում էին հոր կամայականության հասնող
ինչքային իրավագործությունից: Դա ընդգծվում է, երբ համադրում ենք նույն
հարաբերությունը կարգավորող կանոնական և աշխարհիկ նորմերը: Այսպես,
Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի Իէ կանոնում ասված է. «Որդիք որ
ոչ հնազանդին ծնաւդաց իւրեանց՝ որ ինչ հասանէ յընչիցն տացեն սիրով եւ
նստուցեն ուրոյն, գուցէ չար հանդիպի»: Կանոնագիրքը չէր պարզաբանում
«որ ինչ հասանէ» արտահայտությունը: Սակայն «հասանէ» բառը ցույց է տա-
լիս, որ այլ օրենքով կամ սովորութեական նորմով սահմանված էր ինչքի նվա-
զագույն չափ, որից ծնողներից բաժանվող ղավակը չէր կարող ղրկվել: Ավե-
լին, նույն կանոնախմբի ԾԿԳ կանոնը սահմանում էր, որ «ծնաւդք որ զինչս
իւրեանց հոգեացն ալլում տան եւ զիւրեանց զաւակսն ընդ վայր հարկանեն՝
նդովեալ լիցին եւ տուրք նոցա անընդունելի եղիցի»: Հայոց կանոնագիրքը
փոքր-ինչ մասնավորեցրել է դուստրերի իրավունքը ծնողների ինչքի նկատ-

մամբ, Բարսեղի նույն կանոնախմբի ՃԿԴ կանոնում ասված է. «Զինչս ծնաւ-ղացն հաւասարեացեն եւ ընդ Բ քոյրն մի բաժին տացեն»:

Այս էլ ամենը, ինչ Հայոց կանոնագրքում սահմանված է ծնողի և վավակի ինչքային փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով, Դրանք այնքան աննշան են, որ անկարելի է նրանցով որոշակի պատկերացում կազմել ծնողների և վավակների ինչքային իրավունքների և պարտականությունների մասին:

Կանոնական իրավունքի այդ մեծ բացը շոշափելիորեն հարթել է «Աւրէնք յաղթող թագաւորացը»: Հորից առանձնանալը ճանաչելով վավակի իրավունքը, այն նորմավորել է հոր ինչքային պարտականությունը վավակի նկատմամբ: Օրենսդիրը մեծ կարևորություն էր տալիս վավակի վարքին, այսինքն՝ դավակը կատարում էր հորը հնազանդվելու իր պարտականությունը, թե՞ ոչ:

Եթե վավակներն անհնազանդ էին հորը, հայրն իրավունք ուներ «հանել զնոսա ի ժառանգութենէն»: Սակայն նա չէր կարող զրկել վավակներին օրենքով հասանելի բաժնից, Հայրը ռեզուանդակ ինչսն ընդ չորս բաժանէ և զմի մասն ի չորիցն ինն մաս առնէ և զայն հաւասարէ ի վերայ նոցա, որչափ և են անհնազանդքն, թէ արուք և թէ էգք»: Ավելին, հայրը այդպիսի վավակներին կարող էր կտակով զրկել ժառանգման իրավունքից և իր ինչքը օտարին ժառանգել: Որդիներն իրավունք չունեին վիճարկել հոր կտակը, «զի անբամբաս մնասցէ կտակն»: Մասնավորեցնելով, թե որ դեպքերում հայրը իրավունք ուներ վավակին զրկելու ժառանգությունից, «Աւրէնք յաղթող թագաւորացի» 6-րդ հոդվածը սահմանում էր՝ «այսոքիկ են, որք ոչ են արժանի, ըստ հօրն ձգելոյ արտաքս, ժառանգութեան.— յար շնութեամբ վատնողը ընչից և նրմանք սոցին. այսպիսեացն ոչ կարէ տալ զժառանգութիւն, և եթէ տայ, բամբասի կտակն յազգատոհմէ իւրմէ, վասն անհնազանդիցն»:

Նույնի 11-րդ հոդվածն անդրադառնալով կտակով ժառանգման իրավունքին, բոլոր ժառանգների համար սահմանում էր մի ընդհանուր նորմ՝ օրինական ժառանգների ինչքային բաժնի իրավունքը համարում էր անձեռնմխելի կամ անօտարելի: Այնտեղ կարդում ենք. «Եթէ որ զամենայն ստացուածս իւր դրէ դիտելով (կտակագրով—Ս. Հ.) ումէք սեփական, հրամայեն օրէնքս, որ մինչ յինն թողու, այսինքն է չորիցն զմինն բաժանէ յինն և երրորդ մասն մնասցէ ժառանգաւորացն»:

Եթե վավակները կատարել են հորը հնազանդվելու իրենց պարտականությունը, մեծարել և հարգել են նրան որպես ծնողի, ապա 15-րդ հոդվածի ուժով հայրը, «թէ կամի տալ տուրս ինչ նոցա, կարող է, բայց առաջի դատաւորի»: Օրենսդիրն այնքան բացասաբար է տրամադրված եղել ծնողից բաժանվելու երևույթի նկատմամբ, որ այդպիսի վավակին անգամ չի դնում զոնե ինչ-որ չափով արտոնյալ դրուժյան մեջ հայրական ինչքի նկատմամբ. «որ ազատեցան, այլ ևս ոչ կարին ի ժառանգութիւն հօրն մերձենալ, և լինին օտար յամենայն ժառանգութենէ մահու և կենաց: Եւ զկնի ազատութեանն, որ եղէ առաջի դատաւորին, այլ ոչ կարէ գրել յերեսս նոցա կտակ. այլ ի ժամ մահու ժառանգին զնա որդիք կամ դստերք, որ յետ ազատութեանն եղեն, կամ այլ ազգականք»: Պաշտպանվել են այն որդիների և դուստրների ինչքային իրավունքները, որոնք մնացել են հոր հնազանդության տակ: Նշանակում է՝ օրենսդիրը հայրական ամբողջ ժառանգությունը ճանաչում էր իբրև հորից անբաժան ժառանգների սեփականություն: Հնազանդ որդիներն էին ճանաչվում ծնողների ունեց-

վածքի, այդ թվում՝ վարձանք-տուայրի և օժիտ-պոուլդի սեփականատերը (տե՛ս «Աւրէնք յաղթող թագաւորացի» հոդ. 48 և 49):

Ի դեպ, նշված կարգն առանց էական շեղումների, լայն արտացոլում է գտել հայ ազգադրական նյութերում: Հայրը կարող էր բաժանվող որդուն ղրկել ինչ-քից. նա հոր ինչքի նկատմամբ կորցնում էր ժառանգման իրավունքը: Ամբողջ ինչքը փոխանցվում էր հորից անբաժան ողորդներին և այլն²⁴:

Այնուհետև, օրենսդիրը զավակի ինչքային իրավունքը պայմանավորում էր կնոջ պոուլգի կամ անպոուլգի ամուսնության հետ, նախապատվությունը տալով ոչ միայն հոր կամքին, այլև պոուլգով ամուսնացող կնոջից ծնված զավակներին: Նման դեպքերում հայրն իրավունք ուներ «հաւասարիւ ամենեցունց, և անուանել ղորդիս անպոուլգ կնոջն օտար ժառանգիչս, զորս ըստ իւր կամաց արար ժառանգակիցս որդոցն: Ապա թէ ոչ առնէ վասն այսր կտակ, ժառանգին ղնա որդիքն, ծնեալք ի կնոջէն, որ երբ պոուլգս» (հոդ. 74):

Զավակների ժառանգման իրավունքին է նվիրված նաև «Աւրէնք յաղթող թագաւորացի» 144-րդ հոդվածը. «Քոյրքն ժառանգեն զհայր իւրեանց, թէ ոչ են պոուգած. իսկ եթէ հանած են, բերեն ղպոուղն խառնեն, և ժառանգեն ընդ եղբարսն: Եւ թէ մայրն հետ հօրն մեռանի և ոչ ղրէ կտակ, ժառանգեն ղստերը զմայրն՝ հետ եղբարցն»:

Նկատեցինք, որ հոր հնազանդության ներքո գտնվող զավակները ունեին ինչքային որոշ գործունակություն, որ հայրական ինչքի կողքին կարող էր լինել նաև զավակի սեփականությունը: Այդպիսի վիճակ կարող էր ստեղծվել, երբ հոր և մոր գծով ազգականները իրենց թոռանը կտակում էին որոշակի շարժական կամ անշարժ սեփականություն: Եթե կտակողը հոր գծով կամ՝ հայրենի ազգականներն էին, ապա՝ ընդ իշխանութեամբ հօրն է ժառանգութիւն և ի նորին կամս. հապա թէ մօրն աղգականք թողուն մանկան ինչս կտակաւ և տան զայն ի հայրն, հայրն ոչ ունի իշխանութիւն պակասեցուցանել ի նմանէ, բայց եթէ մեռանի որդին առաջի նորա» (տե՛ս հոդ. 149): Ինչպես տեսնում ենք, հոր և զավակի հարաբերություններում գործում էր նույն սկզբունքը, ինչ սահմանված էր ամուսինների ինչքային իրավունքների համար, այն է՝ զավակն ունի բաժան սեփականության իրավունք անձնապես իրեն պատկանող ինչքի նկատմամբ: Այդպիսին էր մոր գծով ազգականներից (պապից, տատից և այլն) թոռներին կտակով փոխանցված սեփականությունը:

Նույն սկզբունքը կիրառված է «Աւրէնք յաղթող թագաւորացի» 146-րդ հոդվածում, ուր ասված է, որ որդին (իր անունից) կարող էր կնքել զանազան գործարքներ՝ փոխառության, առուծախի և այլն, ունենալ «ստացուածս» կամ այլ սեփականություն: Եթե այդպիսի որդին մահանում էր կամ «փախստական լինի յայլ աշխարհ», պարտատերն իրավունք չունի պարտքը նրա հորից խնդրելու: Այդ իրավունքը պարտատիրոջը տրվում էր միայն այն դեպքում, եթե նա «ցուցանէ, թէ հայրն... ունին յայն իրաց աւանդս, կամ այն որդոցն իրք առ նոսա գտանին՝ առնու պարտս. իսկ եթէ պարտական ոչ ունի ժառանգիչս, և ոչ ստացուածս՝ վզինկի փոխատուն»: Ի դեպ, 146-րդ և 149-րդ հոդվածներն ունեն զուտ հայկական ծագում: Նույն դատաստանագրքի ասորական և արաբական խմբագրություններն այդ հոդվածները չունեն:

²⁴ «Ազգադրական հանդես», հ. 10, 1905, էջ 128; Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան, 1941, էջ 195—197:

Այսպիսով, թեև «Աւրէնք յաղթող թագաւորացը» մի շարք հոգւածներ է պարունակում ծնողների և զավակների ինչքային հարաբերութիւնները կարգավորելու մասին, որոնք հնարավորութիւն են ընձեռում փոքր ի շաաւ ամբողջացնելու այդ հարաբերութիւնների հիմնական բովանդակութեան մասին մեր պատկերացումները, այդուհանդերձ, պետք է ասել, որ այն լույս չի սրբուում նույն հարաբերութեան բազմաթիւ մանրամասնութիւնների վրա: Ինչ վերաբերում է մեր պատմիչների առանձին հաղորդումներին (նորենացի, Ստ. Օրբելյան և այլն) և վիժական արձանագրութիւններին, ապա դրանք հարազատ են «Աւրէնք յաղթող թագաւորացին»: Որպես օրինակ նշենք, որ արու զավակ շունեցող Սահակ Պարթևն իր ունեցվածքը փոխանցում է միակ ժառանգին՝ դստերը և վերջինիս որդիներին. այդ գործարքը հարազատ է 149-րդ հոգւածի պահանջներին²⁵,

Տնվոք, հիշյալ իրավահայտ աղբյուրները համարյա ոչինչ չեն պարունակում ծառա-աղախիւնների և նրանց զավակների ինչքային փոխհարաբերութիւնների մասին: Բացառութիւն է կազմում «Աւրէնք յաղթող թագաւորացի» 27-րդ հոգւածը, որի համաձայն ծառան իր տիրոջ թուլլտւութեամբ կարող է կնքել ինչքային գործարքներ, ինչք գնել: Բայց կարո՞ղ էր նա այդ ինչքը տնօրինել, մասնավորապես, ծառանգել իր զավակներին: Թվում է՝ ոչ: Այսպես մտածելու համար անուղղակի հիմք է նույն հուշարձանի 37-րդ հոգւածը, թեև այն նվիրված է ծառայութիւնից ազատվածի և աղախնի ամուսնութիւնից ծնված զավակների ծառանգման իրավունքին, որտեղ կարդում ենք. «Եթէ ծառայ ազատի, և մնայ ընդ իշխանութեամբ տեառն իւրոյ անձնիշխան, և առնուկին յաղախնեաց տեառն զկնի աղատութեանն և ծնանին ի նմանէ որդիս, ոչ ծառանգին զնա որդիք աղախնոյն, այլ ծառանգ լիցի նմա, որ ազատեացն զնա»: Եթե ազատութիւն ստացած ծառայի և աղախնի ամուսնութիւնից ծնվածներն իրենց հօրը ծառանգելու իրավունք չունենին և այդպիսինի ունեցվածքը փոխանցվում էր տիրոջը, ապա առավել հավանական է կարծել, որ նույն տիրոջ ամուսնացած ծառա-աղախնից ծնված երեխաները ևս չունենին ծնողների ինչքը ծառանգելու իրավունք: Նրանցից մեկի մահվան դեպքում դադարում էին մահացածի ինչքային իրավունքները և դրանք փոխանցվում էին ոչ թե զավակներին, որոնք ծառանգման իրավունք չունեին, այլ ծառա-աղախնի տիրոջը: Նշանակում է, ծառա-աղախիւնների զավակները ծառանգման իրավունքի սուբյեկտ չէին, թեև նրանց ծնողները կարող էին ինչքի տեր լինել:

Ծնողների և զավակների միջև ծագող ինչքային հարաբերութիւնների թվին էր պատկանում կարիքավոր անչափահաս զավակին ապրուստի միջոց տրամադրելը: Սկզբնաղբյուրները հնարավորութիւն չեն ընձեռում հանգամանորեն լուսաբանելու այս խնդիրը: Ծնողների և զավակների անձնական հարաբերութիւնների մասին խոսելիս մենք նկատեցինք, որ ընտանիքի անդամների նյութականը հոգալը ճանաչված էր հոր պարտականութիւն: Ավելին, երբ դադարում էր ընտանիքը, որդիները հանձնվում էին հօրը, որովհետև օրինական զավակների տերը հայրն էր: Նա ոչ միայն նախապատվութեան իրավունք ուներ զավակներին իր խնամքին թողնելու՝ կնոջ համեմատութեամբ, այլև պարտա-

²⁵ «Եւ վասն զի ոչ զոյր իւր (Սահակին—Ս. Ն.) արու որդի, բայց միայն դուստր մի... որ ծնա ի Համազասպայ երիս արու որդիս... որոց ետ և կնքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստացուածս զծօղից իւրոց և ազարակաց», Ղ ա զ ա ր տ յ Փ ա ր պ ե ց յ ո յ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 37:

վոր էր հոգալ նրանց ապրուստի մասին: Քանի որ զավակները գտնվում էին հոր խնամքի տակ, ապա ինքնին ենթադրվում էր զավակներին խնամելու հոր պարտականությունը: Բաժանման դեպքում, երբ զավակները թողնվում էին հոր խնամքին, նա մինչև զավակների չափահաս դառնալը պարտավոր էր հոգալ նրանց ապրուստը: Հայրը չէր ազատվում զավակին ապրուստ տրամադրելու պարտականությունից, երբ Շահապիվանի Դ կանոնի ուժով որդիների կեսը հանձնվում էր մորը՝ երեխաների հոր շնաբարո վարքի պատճառով: Թեև Շահապիվանի նշված կանոնում ոչինչ չի ասված այդ մասին, բայց այն ենթադրվում է, նկատի ունենալով զավակների նյութական ապահովելու հոր պարտականությունը: Երեխաների կեսին մոր խնամքին հանձնելը, որը չէր աղատում այդ կեսի ապրուստը հոգալու պարտականությունից, թեև չգիտենք, թե ի՞նչ ձևով է ի՞նչ չափով էր իրականացվում այն: Միակ իրավական նորմը Գանդրայի ժողովի ԺԵ կանոնն է, որով տկար փորձ է արված կարգավորելու երեխաների սննդի խնդիրը: Դրա համաձայն ծնողը պարտավոր էր հոգալ երեխայի ապրուստը «մինչև ի կատարման հասակի»: Ի դեպ, այս կանոնը չի կոնկրետացնում ծնողի ով լինելը (հայր կամ մայր):

ԺԵ կանոնում ասված է. «Ոյք հարկանեն, թողուն ղորդիս իւրեանց եւ ոչ սնուցանեն եւ որչափ ձեռնհաս իցեն ոչ փոյթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին եւ սննդեան մինչև ի կատարման հասակին, այլ որպես ի պատճառս պահոց եւ վանականութեան արհամարհիցէ եւ անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի»²⁶:

Ինչ վերաբերում է ծնողին ապրուստի միջոց տրամադրելու զավակի պարտականությանը, ապա դրա գոյության մասին ոչինչ չգիտենք: Իրավահայտադրյուններն այդ մասին նորմեր չեն պարունակում:

ЛИЧНЫЕ И ИМУЩЕСТВЕННЫЕ ПРАВООТНОШЕНИЯ РОДИТЕЛЕЙ И ДЕТЕЙ В РАННЕФЕОДАЛЬНОЙ АРМЕНИИ

С. А. ОГАНЕСЯН

Резюме

К числу наиболее интересных, и в то же время малоразработанных вопросов истории семейного права Армении принадлежит правовое регулирование личных и имущественных отношений родителей и детей в IV—IX вв.

Изучение правовых и исторических первоисточников определяет, что экономические и классовые условия накладывали свой отпечаток на личные и имущественные отношения родителей и детей. Глава семьи — отец — осуществлял широкие личные права в отношении детей.

Армянское каноническое право в основном регулировало личные отношения, а светское законодательство — имущественные отношения родителей и детей. Первоочередной личной обязанностью родителей было крещение ребенка; воспитание детей в обычно-правовой форме даякства

(кормильство), что было привилегией имущих классов; присвоение новорожденному ребенку имени. Важнейшим личным правом отца было требование от детей повиновения.

Находившиеся под властью отца дети не имели право на принадлежащее отцу или матери имущество в течение всего периода их жизни, ограниченными являлись их правомочия при заключении сделок. Имущество, добытое трудом детей, становилось собственностью отца. Дети приобретали право собственности на имущество родителей: а) при выделении из отцовского дома, б) в случае смерти родителей — в порядке права наследования, в) в связи с дарением или завещанием кровно-родственников.